

**2019 թվականի երրորդ եռամսյակի դրամաշնորհային մրցույթում հաղթող ճանաչված հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվություն**

№	Ծրագրի անվանումը	Հասարակական կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը	Ծրագրի համառոտ նկարագրությունը
1.	«Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքի հանրայնացում»	«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» ՀԿ  ՀՀ, ք. Երևան	<p>«Արցախի էլեկտրոնային գրադարան» (այսուհետ՝ ԱԷԳ) կայքը 2018թ.-ի հունվարի սկզբին արդեն ձևավորված էր, և փորձարկումներից հետո՝ մայիսի 17-ին, շնորհանդեսով ներկայացվեց հանրության դատին:</p> <p>ԱԷԳ եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) կայքի ստեղծման նպատակն է եղել մեկտեղել Արցախի ու Հայաստանի վերաբերյալ գիտական ու գեղարվեստական գրականությունը, այն օտարերկրացիների համար դարձնել Արցախի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու աղբյուր, խթանել Արցախի ու Հայաստանի վերաբերյալ հետազոտությունների իրականացումը, ինչպես նաև որոշակիորեն հակազդել տարբեր մեդիահարթակներում դարաբաղյան հակամարտության, հայոց պետականության կերտման և այլ իրողությունների վերաբերյալ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից խեղաթյուրվող նյութերին:</p> <p>ԱԷԳ-ի բազմապրոֆիլ շտեմարանի հանրայնացումը ճանաչողական հանդիպումների ու շնորհանդեսների միջոցով զգալիորեն կավելացնի էլեկտրոնային գրադարանից օգտվողների թիվը, կապահովի տեղեկատվական հասանելիություն ու մատչելիություն՝ դրանով իսկ նպաստելով կրթության և գիտության զարգացմանը, ընթերցանությանը, ինքնակրթությանը, ինչպես նաև քաղաքացիների սոցիալական հաղորդակցման գործընթացներին:</p> <p>Օգտվելով ցանցի հնարավորություններից՝ ԱԷԳ-ը տեղեկատվական պաշարների համակարգված համալրման ու հանրայնացման միջոցով կմասնակցի ուսումնական ու գիտահետազոտական գործընթացներին, կապահովի դասախոսների, ուսանողների, գիտական աշխատողների, մասնագետների և այլ անձանց գրադարանային-տեղեկատվական սպասարկումը՝ նախընտրելի բնագավառի, հիմնախնդրի վերաբերյալ տրամադրելով անհրաժեշտ տեղեկույթ: ԱԷԳ-ի համալրման կարևորագույն սկզբունքը անընդհատությունն է, ինչպես նաև հավաքածուի համալրման աղբյուրների բազմազանեցումը, ինչը նույնպես</p>

			<p>հնարավոր կլինի կայքի հանրայնացմանն ուղղված նպատակադիր քայերով:</p>
2.	<p>««Հեղինակային երգ» երիտասարդ կիթառահարների մրցույթ»</p>	<p>«Արգինա» մշակութային ՀԿ          ՀՀ, Լոռու մարզ,          ք. Ստեփանավան</p>	<p>2019 թվականի 20 սեպտեմբեր – 20 նոյեմբեր ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել ««Հեղինակային երգ» երիտասարդ կիթառահարների մրցույթ» ծրագիրը, որին կմասնակցեն ՀՀ Լոռու մարզի Վանաձոր, Ստեփանավան և Ալավերդի քաղաքներից 16-30 տարեկան 10-ական (30) երիտասարդ կիթառահարներ: Լավագույն 3 մասնակիցների համար կպատրաստվեն հեղինակային երգի տեսահոլովակներ:</p> <p>Ծրագրի նպատակն է՝ նպաստել Լոռու մարզի (Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի) 30 երիտասարդների ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը՝ ներկայացնելով և հանրայնացնելով նրանց կարողությունները:</p> <p>Ծրագրի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• հավաքագրել Լոռու մարզի Վանաձոր, Ստեփանավան և Ալավերդի քաղաքներից կիթառահար երիտասարդ կատարողների,</li> <li>• կազմակերպել և անցկացնել երիտասարդ կիթառահարների, հեղինակային երգերի կատարման մրցույթ,</li> <li>• իրականացնել հաղթող մասնակիցների տեսա-ձայնագրման աշխատանքներ:</li> </ul>
3.	<p>«Բնության հետ համատեղ»</p>	<p>Չարենցավանի երիտասարդական ուսանողական ՀԿ          ՀՀ, Կոտայքի մարզ,          ք. Չարենցավան</p>	<p>Ծրագրի թեման շրջակա միջավայրի պահպանությունն ու բնապահպանությունն է: Ծրագիրը նախատեսվում է անցկացնել Ծաղկաձորում, այն իրենից ներկայացնում է եռօրյա սեմինար, որի ընթացքում «Եղվարդ բնապահպանական» ՀԿ-ի փորձագետները Չարենցավան համայնքի՝ Չարենցավան, Արզական, Ալափարս, Բջնի, Ֆանտան, Կարենիս, բնակավայրերի երիտասարդներին կներկայացնեն բնապահպանական մի շարք խնդիրներ, կփորձեն միասին գտնել լուծումներ: Ծրագրի նպատակն է վեր հանել Չարենցավան համայնքում առկա բնապահպանական խնդիրները և երիտասարդների ուշադրությունը սևեռել դրանց լուծման համար նորարար ու խելացի լուծումներ գտնելուն: Խնդիրների շարքում առավել կարևոր են գետերի աղտոտումները, ոռոգման ջրի բացակայության պատճառով առկա խնդիրները, անտառահատումները, առկա գազալցակայանների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, աղբի օր օրի ավելացող քանակը, աղբի</p>

			<p>տեսակավորման, աղբի վերամշակման, ծխացող աղբավայրի խնդիրները և այլն: Ծրագրի ընթացքում կուսումնասիրվի համաշխարհային փորձը, կբերվեն օրինակներ, ոչ ֆորմալ կրթական մեթոդներով ու խաղերով կլրացվի սեմինարի յուրաքննաչուր պարապմունք, կլինեն ֆլեշ-մոբեր, գործնական աշխատանքներ, շրջայցեր Ծաղկածորի անտառներում՝ բնությունն ուսումնասիրելու, առկա բնական ռեսուրսներին ծանոթանալու համար:</p>
4.	<p>««Մեր օրերի հերոսը» Ֆրեսկո-2019 միջազգային փառատոնի արձագանքը»</p>	<p>«Ծիածան» սոցիալական ՀԿ  ՀՀ, ք. Երևան</p>	<p>«Ծիածան» սոցիալական ՀԿ-ն առաջարկում է մշակութային երիտասարդական ռազմահայրենասիրական ծրագիր՝ ««Մեր օրերի հերոսը» Ֆրեսկո-2019 միջազգային փառատոնի արձագանքը» խորագրով, որը կներառի ֆիլմերի դիտում-քննարկում, «Հայ պատմական ասեղնագործ ծիսական պարագաներ» ցուցահանդես՝ ՀՀ Արմավիրի մարզի ռազմական ուսումնական զորամասում, Մուղնիի ուսումնական զորամասում, ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում: Ծրագրի նպատակն է նպաստել հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացու ձևավորմանը, հայոց բանակում պատանիների ծառայության նախապատրաստմանն ու պարտքի զգացումի ձևավորմանը, զինվորականի մասնագիտության հանդեպ գրավչության մեծացմանը, ազգային արժեքների գիտակցմանը, հայրենիքի հանդեպ նվիրվածության գիտակցմանը, կարգապահության ամրապնդմանը, հայրենիքը թշնամուց պաշտպանելու գիտակցմանը:</p>
5.	<p>««Առաջադեմ նանոնյութեր և մեթոդներ» ANAM 2019 երիտասարդ գիտնականների միջազգային դպրոց»</p>	<p>«Հայկական գիտական միավորում» ՀԿ  ՀՀ, ք. Երևան</p>	<p>««Առաջադեմ նանոնյութեր և մեթոդներ» ANAM 2019 երիտասարդ գիտնականների միջազգային դպրոց» ծրագիրն ուղղված է ֆիզիկայի ներկայումս ինտենսիվ զարգացող ուղղություններից մեկի՝ նանոֆիզիկայի մասնավորապես նանոմասնիկների և դրանց հատկությունների ուսումնասիրման մեթոդների հիմնախնդիրներով հետաքրքրված երիտասարդների շրջանում համաշխարհային մակարդակով ոլորտում իրականացվող վերջին գիտական հետազոտություններին ու զարգացման միտումներին ծանոթացմանը:</p> <p>Ծրագրի նպատակն է խթանել երիտասարդ ֆիզիկոսների և քիմիկոսների գիտական հակումները և նպաստել նրանց մասնագիտական զարգացմանը:</p> <p>Նշված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները.</p> <p>1. Արտերկրի առաջատար գիտական հաստատությունների հետ գիտական կապերի ընդլայնումը,</p>

			<p>2. Երիտասարդ գիտնականների փոխանակման հնարավորությունների զարգացումը,</p> <p>3. Ուսանողների և երիտասարդ գիտնականներին նանոմասնիկների և դրանց վրա հիմնված կոմպոզիտային նյութերի ուսումնասիրման ժամանակակից զարգացման միտումներին ծանոթանալու հնարավորության ընձեռումը,</p> <p>4. Ուսանողների մասնագիտական կողմնորոշման աջակցությունը,</p> <p>5. Գիտության ոլորտում առաջին քայլերն անող երիտասարդների և ավագ գործընկերների միջև երկխոսության ու փորձի փոխանակման խթանումը,</p> <p>6. Երիտասարդ գիտնականների որակավորման բարձրացումը:</p>
6.	<p>«Մեդիան՝ համայնքի մասնակցության կառավարման միջոց»</p>	<p>«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ</p> <p>ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր</p>	<p>«Մեդիան՝ համայնքի մասնակցության կառավարման միջոց» ծրագրի շրջանակում ՀՀ 2019 թ. երիտասարդական մայրաքաղաք Վանաձորում կանցկացվի ուսուցողական դասընթաց, որի նպատակն է՝ նպաստել ծրագրի շահառու վանաձորցի երիտասարդների մեդիագրագիտությանը, մասնակցային մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և մեդիայի միջոցով նրանց մասնակցությանը համայնքային կյանքին և տեղական ինքնակառավարմանը: Ծրագիրը նպատակ ունի նաև նպաստել շահառու երիտասարդների անհատական և սոցիալական զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանը և նոր մեդիայի միջոցով ՏԻՄ-երիտասարդություն հաղորդակցման որակի բարելավմանը, համայնքում երիտասարդների քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, և մշակութային մասնակցության մակարդակի բարձրացմանը, երիտասարդների զբաղվածության խնդրի որոշակի մեղմացմանը (նրանք՝ որպես բլոգերներ, քաղաքացիական և ֆոտո լրագրողներ, իրենց պատրաստած նյութերով կարող են համագործակցել տեղական և հանարպետական տարբեր ՁԼՄ-ների հետ՝ կայքեր, թերթեր, բլոգներ, ռադիո): Ծրագիրը համապատասխանում է Վանաձորի երիտասարդության կարիքներին և իր շուրջը կհամախմբի համայնքի կառավարմամբ և մեդիայով հետաքրքրված վանաձորցի 25 երիտասարդի, որոնց համար Վանաձորում կանցկացվի դասընթաց՝ կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդների համադրմամբ: Շահառուները ձեռք կբերեն գիտելիքներ և հմտություններ հետևյալ թեմաների շուրջ՝ մասնակցային կառավարման գործընթաց,</p>

			<p>մասնակցության մեխանիզմներ, տեղեկատվություն ստանալու և այն հանրայնացնելու կարգ, մեդիա մասնակցության սկզբունքներ, քաղաքացիական լրագրություն, մեդիագրագիտություն, լրսանկաչություն, նոր մեդիա և բլոգավարության հիմունքներ և այլն: Շահառուները կտեղծեն բլոգներ՝ ներկայացնելով իրենց պատրաստած լրագրողական նյութերը: Նրանք իրենց պատրաստած նյութերով կարող են համագործակցել տարբեր ՁԼՄ-ների հետ, ինչն էլ որոշակիորեն կնպաստի շահառու երիտասարդների զբաղվածության խնդրի լուծմանը և որպես քաղաքացիական լրագրողներ՝ երիտասարդների դերի ու մասնակցության մակարդակի բարձրացմանը համայնքի ու երկրի տարբեր ոլորտներում:</p>
7.	«Երիտասարդ ակումբավարների դպրոց»	<p>«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ</p> <p>ՀՀ, ք. Գյումրի</p>	<p>«Երիտասարդ ակումբավարների դպրոց» ծրագրի նպատակն է ուսուցիչների ակումբավարության հմտությունների զարգացման և դպրոցներում ակումբների ներդրման միջոցով նպաստել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը և մոտիվացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է փորձագետների կողմից մշակել հայագիտական և բնագիտամաթեմատիկական ակումբների ուղեցույցներ և իրականացնել Շիրակի մարզի 40 երիտասարդ ուսուցիչների ակումբավարների վերապատրաստման դասընթացներ: Դասընթացներն իրականացվելու են ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդներով, (հետազոտության, իրավիճակային, խաղային): Դասընթացի մասնակիցները կձանոթանան ակումբներ վարելու հմտություններին, կրթական մեթոդներին և գործիքներին, խմբային աշխատանքների կազմակերպման գործիքակազմին և գործնական վարժանքների միջոցով կամրապնդեն ստացած գիտելիքները և հմտությունները: Ծրագրի ավարտական փուլում նախատեսվում է գործնական ուղղվածության դասեր, որոնք կտևեն երեք շաբաթ: Մասնակիցները իրենց դպրոցներում կստեղծեն ակումբները, որտեղ կփորձեն աշխատել ծրագրի շրջանակում ստեղծված ակումբավարման ուղեցույցներով: Ծրագրի վերջում կանցկացվի շնորհանդես և ծրագրի արդյունքների ամփոփում:</p>
8.	«Ներառական արշավներ»	<p>«Սպիտակ ձեռնափայտ» հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող ՀԿ</p> <p>ՀՀ, Կոտայքի մարզ,</p>	<p>Մեզանից յուրաքանչյուրը իր կյանքի որոշակի հատվածում ցանկանում է ավելի հարմարավետ և ակտիվ հանգիստ, և բոլորս կյանքի ավելի վաղ հասակում ցանկացել ենք ունենալ արշավներ տարբեր լեռնային բարձունքներ, անկախ հնարավորություններից մարդը ցանկանում է զգալ կյանքի լիարժեքությունը, իսկ արշավները հենց այդ</p>

	<p>ք. Չարենցավան</p>	<p>լիարժեքության ապահովման տարբերակներից մեկն է:          Հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց ներառման կարևորությունը և վերջինիս իրագործումը՝ ծրագրի նպատակն է հիմնականում երիտասարդների շրջանում կազմակերպել տարբեր արշավներ, որի շրջանակներում ապահովվելու է ներառումը, խթանվելու է առողջ ապրելակերպ ձևավորումը երիտասարդների շրջանում և էկստրիմ տուրիզմի զարգացումը Հայաստանում:</p>
--	----------------------	---

**ՀՀ 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաքում գործող հասարակական կազմակերպությունների համար 2019 թվականի երրորդ եռամսյակի դրամաշնորհային մրցույթում հաղթող ճանաչված հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվություն**

№	Ծրագրի անվանումը	Հասարակական կազմակերպության անվանումը	Ծրագրի համառոտ նկարագրությունը
1.	«Բարի գալուստ ուսանող»	<p>««Հավասար հնարավորություններ» ուսանողական, քաղաքացիական նախաձեռնություն» երիտասարդական ՀԿ</p> <p>ՀՀ, ք. Վանաձոր</p>	<p>«Բարի գալուստ ուսանող» ծրագրի հիմնական նպատակն է խթանել ակտիվ ուսանողական գործունեությունը, բարձրացնել ուսանողների մասնակցությունը տնտեսաքաղաքական մշակութային միջոցառումներին, որի բացը հատկապես ակնհայտ է մարզերի պարագայում: Ծրագիրը կիրականացվի Լոռու մարզի Վանաձոր քաղաքում՝ ընդհանուր 50 մասնակիցների ներգրավմամբ: Ծրագրի թիրախն են բուհ ընդունված առաջին կուրսեցիները: Ծրագիրը կիրականացվի 2019 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ 2 ամիս տևողությամբ:</p> <p>Ծրագիրն իր նպատակին ու առկա խնդիրների լուծմանը կհասնի դասընթաց-հանդիպումների միջոցով, ծրագրի շրջանակում կտպագրվի գրքույկ որը կհանդիսանա ուղեցուց բուհ նոր ընդունված ուսանողների համար: Ծրագիրը կամփոփվի ցերեկույթով, որի նպատակն է ամրապնդել միջբուհական կապերն ու զարկ տալ նոր համագործակցությունների:</p>